Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/43407/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

19 դեկտեմբերի 2023 թվական **քաղաք Երևան**

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Հ. Ջալալյանի (այսուհետ նաև՝ Դատարան), ուսումնասիրելով «Կապավոր» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 11.12.2023 թվականի թիվ «ԵՊՀ-ԲՄԱՇՁԲ-23/1» որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, և քննարկելով այն վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

13.12.2023 թվականին «Կապավոր» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացվել Դատարան ընդդեմ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ խնդրելով անվավեր ճանաչել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 11.12.2023 թվականի թիվ «ԵՊՀ-ԲՄԱՇՁԲ-23/1» որոշումը:

Հայցադիմումը Դատարանում մուտքագրվել է 13.12.2023 թվականին, դատավորի աշխատակազմին հանձնվել՝ 14.12.2023 թվականին:

Դատարանն, ուսումնասիրելով հայցադիմումը, արձանագրում է, որ այն ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122-րդ հոդվածներով սահմանված պահանջներին համապատասխան:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան, հետևաբար, Դատարանը գտնում է, որ հայցադիմումը պետք է ընդունել վարույթ:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-125-րդ, 199-200-րդ, 234.6-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

«Կապավոր» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 11.12.2023 թվականի թիվ «ԵՊՀ-ԲՄԱՇՁԲ-23/1» որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Հ.ՋԱԼԱԼՅԱՆ**